ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/66/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի փետրվարի 17-ին քննելով ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Աշոտի Խաչատրյանի ընտանիքի անդամ՝ Լուսինե Խաչիկի Գևորգյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/66/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրականացրել է Լուսինե Խաչիկի Գևորգյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է, որ վերջինս Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրվել իրեն պատկանող «ՀԱՇ ԸՆԴ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 7-ին Լուսինե Գևորգյանին հասցեագրել է թիվ 01/474/1-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Լուսինե Գևորգյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 10-ին, դրա մասին հաստատումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.3 2025 թվականի փետրվարի 13-ին պատշաճ ծանուցված Լուսինե Գևորգյանի բացակայությամբ, սակայն վերջինիս ներկայացուցիչներ՝ Վահե Սեդրակյանի և Դավիթ Գրիգորյանի (որպես լիազորությունները հավաստող փաստաթուղթ ներկայացվել են 2025 թվականի փետրվարի 11-ի Լուսինե Գևորգյանի կողմից տրված լիազորագրերը) ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 15/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Լուսինե Գևորգյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Լուսինե Գևորգյանի ներկայացուցիչները 2025 թվականի փետրվարի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ հայտնել են հետևյալը.

«Հայտարարագիրն անձամբ հայտարարատուի կողմից չի լրացվել, լրացվել է նրա ներկայացուցիչ Դավիթ Գրիգորյանի կողմից, սակայն մինչև հայտարարագիրը հանձնելը Լուսինե Գևորգյանը ծանոթացել է դրա բովանդակությանը, տվյալները չհայտարարագրելու մասով որևէ միտում առկա չի եղել, պարզապես վրիպակի արդյունքում այդ տվյալները չեն ներառվել ներկայացվող Հայտարարագրում: Ընկերությունը գործող է:»

Միաժամանակ, ներկայացուցիչները խնդրել են հաշվի առնել այն հանգամանքը, որ իրավախախտումն արձանագրվել է առաջին անգամ և Հանձնաժողովը հայտարարագրերի ստուգման արդյունքում առաջին անգամ է հայտարարտուին ծանուցել սխալ կամ ոչ ամբողջական տվյալների առկայության մասին: Ավելի վաղ իմանալու պայմաններում նման իրավախախտում չէր դրսևորվի, քանի որ լրացնելիս հիմնականում օգտվել են նախորդ տարիներին ներկայացված հայտարարագրում լրացված տվյալներից: Ըստ էության, խախտումը տեխնիկական խնդիր է, քանի որ առաջին անգամ ներկայացված հայտարարագրում տվյալները չեն ներառվել և հետագայում այդ տվյալներն են հիմք ընդունվել:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/66/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ Լուսինե Գևորգյանը՝

3.1 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների շտեմարանի համաձայն հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանի կինը:

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 19-ից հանդիսանում է «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության 100% բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար: Պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն՝ «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերությունը գործող է, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

3.4 Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության 100 % բաժնեմաս ունենալու տվյալը:

3.5 Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնում հայտարարագրվել է «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերությանը հանձնված և վերադարձված 5,000,000 ՀՀ դրամի չափով փոխառության գումարը, նշելով «կողմերի միջև առկա կապի բնույթը՝ հիմնադիր»:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.3 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, **բաժնեմասը**, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթ, բացառությամբ բանկային վկայագրի):

4.5 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական

իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանի ընտանիքի անդամ Լուսինե Գևորգյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն, որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի մայիսի 31-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, այն է՝

Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել «ՀԱՇ ԸՆԴ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Միաժամանակ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնում Լուսինե Գևորգյանի կողմից հայտարարագրվել է «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերությանը հանձնված և վերադարձված 5,000,000 ՀՀ դրամի չափով փոխառության գումարը՝ նշելով «կողմերի միջև առկա կապի բնույթը՝ հիմնադիր»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը արձանագրում է, որ Լուսինե Գևորգյանը Հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում չի հայտարարագրել «ՀԱՇ ԸՆԴ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը, մինչդեռ նույն Հայտարարագրի «Բ.4.1. Հանձնված և վերադարձված փոխառություններ» բաժնում ներկայացրել է իր՝ «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության հիմնադիր լինելու տվյալը:

Այս առնչությամբ Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ Լուսինե Գևորգյանի կողմից նույն Հայտարարագրում իր՝ «ՀԱՇ ԸՆԴ ՎԻ ՖՈՒԴ» ՍՊ ընկերության հիմնադիր լինելու վերաբերյալ տվյալը ներկայացնելով, ըստ էության բացահայտվել է տվյալ ընկերությունում նրա բաժնեմասնակցության վերաբերյալ փաստը, որպիսի պայմաններում ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Աշոտի Խաչատրյանի ընտանիքի անդամ՝ Լուսինե Գևորգյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լուսինե Խաչիկի Գևորգյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Խաչիկի Գևորգյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Լուսինե Խաչիկի Գևորգյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ